

Արձանագրություն N 1-02/18

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2018 թ.-ի
մարտի 2-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Յ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Յակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Թոքմաջյան Վ.Յ., Գրիգորյան Թ.Գ., Առաքելյան Ա.Ա., Մուսայելյան Վ.Ս., Ավետիսյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Յարուբյուկյան Մ. Ա., Չաքարյան Գ.Է.:

Յրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Յարուբյուկյան Ռ.Մ.:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնափորձական հողամասում գյուղտեխնիկայի պահպանման նպատակով ինքնակամ կառուցված շինության մասին:
2. Ուսումնափորձարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով Աջափնյակի ուսումնափորձական կենտրոնին կից հողատարածքները վարձակալելու մասին:
3. Այլ հարցեր:

Լսեցին 1 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնափորձական հողամասում գյուղտեխնիկայի պահպանման նպատակով ինքնակամ կառուցված շինության մասին:

Որոշեցին 1 - Սահմանված կարգով կառուցքը օրինականացնելու նպատակով դիմել Ստեփանակերտի քաղաքապետ՝ Ս.Ա.Գրիգորյանին:

Լսեցին 2 – Ուսումնափորձարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով ներկայացվեց առաջարկ Աջափնյակի ուսումնափորձական կենտրոնին կից հողատարածքները վարձակալել:

Որոշեցին 2 - Ուսումնափորձարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով Աջափնյակի ուսումնափորձական կենտրոնին կից հողատարածքները վարձակալելու նպատակով դիմել քաղաքապետ՝ Ս.Ա.Գրիգորյանին:

Լսեցին 3 – Ներկայացվեց առաջարկ առկա ուսուցման համակարգի ուսանողների առարկայական պարտքերի մարման շրջանը հետաձգելու մասին:

Որոշեցին 3 – Մինչև մարտի 15-ը հետաձգել առկա ուսուցման համակարգի ուսանողների առարկայական պարտքերի մարման շրջանը:

Լսեցին 4 – Ռեկտորատի քննարկմանը ներկայացվեց ՏՏ և բնագիտական առարկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ռ.Յարուբյուկյանի ներկայացումը, համաձայն որի առաջարկվում է «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության երկրորդ կուրսի մագիստրանտներ՝ Դավիթ Եղիշի Արզումանյանին և Նիկոլայ Արամի Սարգսյանին թույլատրել ռուսերեն լեզվով ներկայացնել մագիստրոսական թեզերը՝ հաշվի առնելով նրանց ռուսական կրթությունը:

Որոշեցին 4 – Յիմք ընդունելով ՏՏ և բնագիտական առարկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ռ.Յարուբյուկյանի ներկայացումը «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության երկրորդ կուրսի մագիստրանտներ՝ Դավիթ Եղիշի Արզումանյանին և

Նիկոլայ Արամի Սարգսյանին թույլատրել ռուսերեն լեզվով ներկայացնեն մագիստրոսական թեզերը:

Նախագահ`	ստորագրություն	Յ.Վ.Թոքմաջյան
Քարտուղար`	ստորագրություն	Ա.Ա.Առաքելյան